

Նոյեմբերի 23-ին, ՀՀ Առողջապահության Նախարարության նախաձեռնությամբ <<Մոսկվայի Տանը>> , կայացավ ստոմատոլոգիական ոլորտի ՀԿ-ների հանդիպում (կլոր սեղան):

Հանդիպմանը ներկա էին առողջապահության նախարարության բուժ. վարչության պետ՝ պարոն Դավիթ Մելիք-Նուբարյանը և նախարարի ստոմատոլոգիական ոլորտի խորհրդատուները՝ Դավիթ Մաթևոսյանը և Հրանտ Տեր-Պողոսյանը: Ներկայացվեց խնդրահարույց հարցը՝ ստոմատոլոգիական ոլորտի հարկային քաղաքականությունը տվյալ փուլում և դրա փոփոխման կամ արդիականացման անհրաժեշտությունը:

Հնարավորություն տրվեց ներկա բոլոր մասնակիցներին արտահայտել իրենց տեսակետները: Նորաստեղծ <<Կառուցողական ստոմատոլոգիա>> ՀԿ-ի ղեկավարի կողմից հնչեց պահանջ՝ նվազեցնել արտոնագրային վճարի (հարկի) դրույքաչափը, որը հիմնավորվեց կայացրած մոնիտորինգի թվային արդյունքներով: Ներկայացվեցին տվյալներ, որոնց համաձայն 20 կլինիկաներում մեկ բազկաթոռի մեկ ամսվա շրջանառությունը չի գերազանցել 495.000 դրամը: Համաձայն ներկայացրած տվյալների, ծախսային մասը հանելուց հետո մեկ բազկաթոռի ամսական շահույթը կազմում էր մոտ 30000 դրամ:

Ներկայացված փաստարկները մասնակիցների մեծամասնության կողմից որակվեցին որպես ոչ հավաստի: Ելույթներում նշվեց, որ ստոմ բազկաթոռը զբաղված է առնվազն 10 ժամ: Նույնիսկ ամենամատչելի գնացուցակի դեպքում, հնարավոր է ապահովել օրը 30.000-40.000 դրամ շրջանառություն: Նշվեց, որ այլ պարագայում, տվյալ գործունեության տեսակը անարդյունավետ է: Բժիշկը հնարավորություն չի ունենա պատշաճ որակով կատարել իր վրա դրված պարտավորությունը: Բոլոր ելույթներում նշվեցին արտոնագրային հարկատեսակի թե՛ դրական և թե՛ բացասական կողմերը: Դրականն այն է, որ բժիշկը ի սկզբանե կարող է ներառել այդ հարկը իր ծախսային մասի մեջ, որը կազմում է 80000 դրամ միայն Երևան քաղաքի 1-ին և 2-րդ գոտում, 4-րդ բազկաթոռից այն նվազում է և կազմում է՝ 48000 դրամ: Երևան քաղաքի այլ գոտիներում այն կազմում է 57000 դրամ, մարզկենտրոններում՝ 57000 դրամ, այլ քաղաքներում՝ 28000 դրամ, իսկ սահմանամերձ շրջաններում՝ 14000 դրամ: Բժիշկը գերծ է մտում լրացուցիչ հարկային քաշքշուկներից և ունի հնարավորություն լիարժեք գրանցել (ձևակերպել) բոլոր աշխատանքները, որը բխում է ինչպես բուժառուների, այնպես էլ բուժօգնականների շահերից: Հնարավորություն է ստեղծում օգտագործել առավել պարզ հաշվապահական գործառույթներ, իսկ պետությանը հնարավորություն է տալիս այս փուլում չվատնել հավելյալ կադրային ռեսուրսներ ոլորտը վերահսկելու համար: Բացասական կողմերից նշվեց, որ դժվարություններ են ստեղծվում երիտասարդ մասնագետների համար, նաև կան խնդիրներ ուսումնական նպատակով բազկաթոռների հետ: Նշվեց մանկական ստոմատոլոգիայի հետ կապված մտահոգություն:

Ընդհանուր առմամբ մասնակիցների ճնշող մեծամասնությունը նշեց այս փուլում տվյալ հարկատեսակի մնալու նպատակահարմարությունը: Միայն <<Կառուցողական ստոմատոլոգիա>> ՅԿ ղեկավարը վերջում, փոխելով նվազեցնելու մասին պնդումը, առաջարկեց անցնել շրջհարկի, կամ ընդհանուր հարկման մեխանիզմի, որը իրենց կարծիքով առավել արդար է:

Սակայն ըստ էության նոր հարկատեսակը նշանակում է ոլորտում գործող մեծամասնության համար հարկերի կտրուկ ավելացում իրական շրջանառության ցույց տալու պարագայում, որ հղի է ստոմատոլոգների (այդ թվում նաև փոքր և միջին կլինիկաների) դժգոհությամբ: Այլ պարագայում հնարավոր է, որ <<Կառուցողական ստոմատոլոգիա>> ՅԿ կարծում է, որ մնացել են ակնկալիքներ աշխատել հին ոճով և փորձել աշխատանքի մի մասը չգրանցել:

Բացի այդ նշվեց, որ ոլորտում առկա են բազմաթիվ այլ խնդիրներ և պետք է կենտրոնանալ դրանց լուծման ուղղությամբ: Խնդիրներից առանձնացվեց կլինիկաների լիցենզավորման գործող կարգը, որը ռեալ խոչընդոտ է հանդիսանում ստոմատոլոգիական կլինիկաների սպիտակ դաշտում գործելու համար: Այսօր շատ կլինիկաներ գործում են և ունեն թերի լիցենզավորում, սակայն կատարում են բոլոր ծառայությունները: Բոլորս գիտենք, որ ստոմատոլոգիական ոլորտի մոտ 90%-ից ավել բժիշկներ աշխատում են վարձակալության սկզբունքով, սակայն փաստացի ձևակերպված են որպես աշխատող: Պետք է ջանքեր գործադրել, որպեսզի օրենսդրական միջավայրում լուծենք այս անհամապատասխանությունները: Նաև արտահատվեց մտահոգություն բազմաքանակ մասնագետների ստոմ. ոլորտ ընդգրկման վերաբերյալ, նշվեցին թվեր՝ 9000-ից 10000 ստոմատոլոգ 3.000.000 ազգաբնակչության համար, որը մի քանի անգամ գերազանցում է խելամիտ թույլատրելի սահմանը: Այսօր նույնպես շարունակաբար տարեկան շուրջ 400 շրջանավարտ ստանում են աշխատանքի իրավունք և մտնում աշխատաշուկա:

Յայ Ստոմատոլոգների Միությունն ՅԿ-ը կարևորում է այս փուլում ավելի ակտիվ բացատրական աշխատանքների անհրաժեշտությունը: Կարիք կա լիարժեք բացահայտել բոլոր խնդիրները և հստակեցնել նպատակները: Տարիներ շարունակ ՅՍՄ-ը գտնվում է ստոմատոլոգների՝ մասնավորապես երիտասարդ մասնագետների կողքին: ՅՍՄ-ն ունի ներկայացուցիչներ գրեթե բոլոր մարզերում, կազմակերպել է բազմաթիվ գիտապրակտիկ կոնֆերանսներ թե՛ Երևանում և թե՛ մարզերում, որով նպաստել է մասնագետների կրթական և մասնագիտական զարգացմանը: Տարիներ շարունակ ՅՍՄ-ը համագործակցում է առողջապահության, բնապահպանության և կրթության նախարարությունների հետ ոլորտում տիրող բազմաթիվ խոչընդոտների վերացման վերաբերյալ և քաջատեղիակ է ստոմատոլոգիայի ոլորտում տիրող իրավիճակին:

Ի վերջո պետք է պարզել մի քանի խորքային հարցեր.

1.Ստոմատոլոգիական ոլորտում կրթական համակարգի զարգացում

Ա.Արոյո՞ք ստանում ենք անհրաժեշտ քանակի և որակի մասնագետներ

Բ.Ի՞նչ է պետք անել որպեսզի մասնագետները,որոնք մտնում են աշխատաշուկա լիարժեք պատրաստ լինեն կատարելու իրենց վրա դրված պարտականությունները:

2.Ստոմատոլոգիական բիզնեսի կազմակերպում

Ա.Ի՞նչ կարևորագույն գործոններից է բաղկացած գնագոյացումը ստոմատոլոգիայում

Բ.Ի՞նչ տոկոս է դրա մեջ կազմում հարկային բեռը

Գ.Ի՞նչ գործողություններ պետք է կատարել, որպեսզի բժիշկը նաև լինի մասնագիտական իրավական պաշտպանված

Դ.Ի՞նչքանով է կարևոր բժիշկ-բուժառու հարաբերությունների կարգավորումը ոլորտի զարգացման համար

Ե.Ի՞նչպես պետք է վերահսկվի ազգաբնակչության ստոմատոլոգիական բուժման որակը և ի՞նչպիսի ստոմատոլոգիա ունենք այսօր և ի՞նչին պետք է ձգտել:

Հարգելի՛ գործընկերներ ՀՍՄ-ը ունի ոլորտի այս և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ իր տեսլականը:Հրավիրում ենք Ձեզ համախմբվել ՀՍՄ-ն շուրջը, որովհետև միայն միահամուռ ուժերով կարելի է հասնել մեր երազած ստոմատոլոգիային, որտեղ պետք է տիրի պրոֆեսիոնալիզմը ու գիտելիքը և իսպառ բացակայի դիլետանտիզմը և անգրագիտությունը: